ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/70

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 07.06.2018թ. թիվ 03/26-3/10227-18 «Լեգալ Պլյուս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 01.06.2018թ. թիվ ԴՎԱ/1976 գրության հիման վրա, 07.06.2018թ. «Լեգալ Պլյուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 01.06.2018թ. թիվ ԴՎԱ/1976 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/4 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգում 25-րդ չափաբաժնի մասով «Լեգալ Պլյուս» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով «Լեգալ Պլյուս» ՍՊԸ-ն armeps.am համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

«Լեգալ Պլյուս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում իր որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը չի ներկայացրել:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը, հանձնաժողովը որոշեց 25-րդ չափաբաժնի մասով «Լեգալ Պլյուս» ՍՊԸ-ի հայտը մերժել:»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. **<u>«Լեգալ Պլյուս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 07.06.2018թ. գրությամբ դիմել է «Լեգալ Պլյուս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.06.2018թ. թիվ 03/26-3/10227-18 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Լեգալ Պլյուս» ՍՊԸ-ի տնօրեն Տիգրան Սիմոնյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/70 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 07.06.2018թ. թիվ 03/26-3/10227-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 01.06.2018թ. թիվ ԴՎԱ/1976 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/4 ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/4 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 17.04.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 և 24.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունները, Ընկերության կողմից ներկայացված հայտի պատճենը. «Լեգալ Պլյուս» ՍՊԸ-ի կողմից 13.06.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքը, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 03.07.2018թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/80 որոշումը.

Բողոքներ քննող անձը՝ քննելով «Լեգալ Պլյուս» ՍՊԸ-ի կողմից 13.06.2018թ ներկայացրած բողոքը, 03.07.2018թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/80 որոշմամբ «Լեգալ Պլյուս» ՍՊԸ-ի կողմից 13.06.2018թ. ներկայացրած բողոքը մերժել է:

Թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/80 որոշմամբ արձանագրվել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/4 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ նաև ընթացակարգ), որին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Լեգալ Պլյուս» ՍՊԸ-ն:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի՝ N 3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/4 ծածկագրով

գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:

Հանձնաժողովը 17.04.2018թ. ժամը 11:00 նիստի թիվ 3 արձանագրության՝

- 4.1 կետով որոշել է Ընթացակարգի 25-րդ չափաբաժնի մասով առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել «Լեգալ Պլյուս» ՍՊԸ-ին:

- 4.2 կետով որոշել է առաջին տեղն զբաղեցրած մասնակիցին՝ առաջարկել ներկայացնելու ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-8/4 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Նշված փաստաթղթերը ներկայացնելու նպատակով՝ 15.05.2018թ. ոչ ավտոմատ եղանակով «Լեգալ Պլյուս» ՍՊԸ-ն ծանուցվել է:

Հանձնաժողովը 24.05.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստին թիվ 4 արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ «Լեգալ Պլյուս» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը չեն ներկայացվել և որոշել է վերջինիս հայտը մերժել:

«Լեգալ Պլյուս» ՍՊԸ-ն 13.06.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը իր էլեկտրոնային հասցեին armeps էլեկտրոնային համակարգի ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ստացել է ծանուցումը, որի համաձայն՝ «Լեգալ Պլյուս» ՍՊԸ-ն, ծանուցումն ուղարկելու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պետք է ներկայացնի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը՝ ՀՀ պաշտպանության նախարարության հանձնաժողովի քարտուղար Տ. Աբրահամյանի t.abrahamyan@mil.am էլեկտրոնային հասցեին: Ընկերությունը սահմանված ժամկետում հանձնաժողովի քարտուղար Տ. Աբրահամյանի t.abrahamyan@mil.am էլեկտրոնային հասցեին ուղարկել է գնահատող հանձնաժողովի կողմից պահանջված որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերն, ինչը կարող է հաստատվել նաև համապատասխան ապացույցներով: Սակայն, անհասկանալի պատճառներով Հանձնաժողովի կողմից «Լեգալ Պլյուս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ իբրև թե վերջինիս կողմից սահմանված ժամկետում

որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չեն ներկայացվել:

Բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ այդ ժամանակահատվածում օգտագործել է երկու տարբեր էլ. փոստի հասցեներ, ինչի հետևանքով խառնաշփոթ է առաջացել և չի կարող ներկայացնել որևէ ապացույց այն մասին, որ պահանջված փաստատթղթերը սահմանված ժամկետում ուղարկվել են:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայման-ներին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:
- 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):
- 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ

նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:

Հրավերի 7.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում ապրանքի ամբողջական նկարագիրը ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Պատվիրատուի կողմից համակարգի միջոցով ոչ՝ ավտոմատ եղանակով «Լեգալ Պլյուս» ՍՊԸ-ին ուղարկվել է Ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստթղթերը ներկայացնելու վերաբերյալ համապատասխան ծանուցումը, սակայն պահանջվող փաստաթղթերը «Լեգալ Պլյուս» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ընդհանրապես չեն ներկայացվել:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ «Լեգալ Պլյուս» ՍՊԸ-ն որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստթղթերը ուղարկելու փաստը հավաստող որևէ ապացույց չներկայացրեց:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Լեգալ Պլյուս» ՍՊԸ-ն՝ Հրավերով սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չներկայացնելով՝ խախտել է Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին

կետով, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով, ինչպես նաև Հրավերի 7.13 կետի 4-րդ ենթակետով սահմանված պահանջները:»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.06.2018թ. թիվ 03/26-3/10227-18 գրությամբ «Լեգալ Պլյուս» ՍՊԸ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Լեգալ Պլյուս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**